ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 263

« 10 » 12 . 2025 թ.

ք. Երևան

<<ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով>> ՊՄ ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Գ.Պետրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և «Տեխնիկական անվտանգության փորձագիտական կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Հակոբյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է իրականացնել տեխնիկական անվտանգության փորձաքննություն (այսուհետ՝ Ծառայություն) և տալ փորձագիտական եզրակացություն՝ Պատվիրատուի կողմից շահագործվող հետևյալ

N	Օբյեկտի անվանումը	Օբյեկտի գտնվելու վայրը	Փորձաքնն. անվ.	ԱՎՕ-ի N	Տվյալներ	Գործարանային N	Քանակը	Արժեքը, ընդամենը (դրամ)	Փորձագետ
1.	Կաթսայատուն	ք.Երևան Գևորգ Քոչարի փող., 21ա շենք	Տեխնիկական	3/1-0010	100կվտ	4	1	69020	Վ.Նուրոյան
Ընդամենը								**69020**	

արտադրական վտանգավոր օբյեկտ(ներ)ի (այսուհետ՝ ԱՎՕ) կամ շահագործվող ԱՎՕ-ի նախագծային փաստաթղթերի, տեխնիկական անվտանգության վկայագրի, շահագործման համար նախապատրաստվող ԱՎՕ-ի նախագծային փաստաթղթերի վերաբերյալ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար:

1.2. Կատարողն իր որոշմամբ նշանակում է սույն Պայմանագրի 1.1. կետով սահմանված Ծառայության մատուցումն ապահովող փորձագետ կամ փորձագիտական խումբ (այսուհետ՝ Փորձագետ), որը պատասխանատվություն է կրում իր կողմից տրված եզրակացության հավաստիության համար:

1.3. Կատարողը Ծառայության մատուցումը սկսում է սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը 3.2. կետով սահմանված կարգով իր հաշվարկային հաշվին մուտքագրվելուց հետո և Ծառայության մատուցումն ավարտում է գումարը ստանալու պահից սկսած՝ <<5>> աշխատանքային օրվա ընթացքում:

1.4. Ծառայության իրականացման դիմաց վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում են սույն Պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ դրվել Պատվիրատուի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել Ծառայության իրականացման արդյունքում Պատվիրատուին տրամադրվող եզրակացության բովանդակության վրա:

1.5. Ծառայության իրականացումը Կատարողի կողմից ավարտված, իսկ սույն Պայմանագիրը կատարված է համարվում փորձագիտական եզրակացությունն ու հաշիվ ապրանքագիրը Պատվիրատուին ներկայացնելու պահից:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունը մատուցել տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրությանը համապատասխան՝ պատշաճ որակով, Պայմանագրով սահմանված ժամկետում.

2.1.2. Ծառայության մատուցման ավարտից հետո եզրակացության մեկ օրինակը հանձնել Պատվիրատուին:

2.1.3. Հսկողության իրականացման ընթացքում ապահովել իր աշխատակիցների (փորձագետների) կողմից ստացված ցանկացած տեղեկատվության գաղտնիության պահպանումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Ծառայության մատուցման ընթացքում պահանջել «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված Պատվիրատուի տեխնիկական անվտանգության ծառայությանն առնչվող փաստաթղթերը (հրամաններ, պայմանագրեր և այլն):

2.2.2. Սույն Պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում անարգել մուտք գործել սույն Պայմանագրի 1.1. կետում թվարկված օբյեկտ(ներ)ի գտնվելու վայրի տարածք, շենքեր, շինություններ:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Ծառայության մատուցման համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 3.1. կետում նշված գնին համապատասխան գումար՝ 3.2. կետով սահմանված ժամկետի ընթացքում.

2.3.2. Ծառայության մատուցման ընթացքում Փորձագետին տրամադրել սույն Պայմանագրի 2.2.1. կետով սահմանված պահանջվող փաստաթղթերը.

2.3.3. Ծառայության մատուցման ընթացքում Փորձագետին թույլատրել անարգել մուտք գործել սույն Պայմանագրի 1.1. կետում թվարկված օբյեկտ(ներ)ի գտնվելու վայրի տարածք, շենքեր, շինություններ:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ծառայության մատուցման ընթացքում, Ծառայության մատուցմանը մասնակից դարձնել՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված իր տեխնիկական անվտանգության ծառայությանը:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1.Սույն Պայմանագրի գինը կազմում է՝ 69020 (վաթսուն ինը հազար քսան դրամ) ՀՀ դրամ, այդ թվում Ծառայության մատուցման արժեքը՝ 57516 դրամ, ԱԱՀ-ն՝ 11504 դրամ:

3.2. Պատվիրատուն սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագիրը կնքելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գումարը սույն Պայմանագիրը կնքելուց հետո երեք ամսվա ընթացքում չվճարելու դեպքում սույն Պայմանագիրը համարվում է լուծված, իսկ Պատվիրատուի գործողությունները համարվում են պայմանագրային պարտավորություններից հրաժարում:

3.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կողմ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելու դեպքում, պարտավոր է սույն Պայմանագրի 3.1. կետով սահմանված գնի 10%-ը վճարել մյուս կողմին՝ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելուն հաջորդող երեք օրվա ընթացքում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1.Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված և կնքված են կողմերի, կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն Պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.2. Սույն Պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<< ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով>> ՊՄ	**«Տեխնիկական անվտանգության փորձագիտական կենտրոն» ՍՊԸ**
Հասցեն՝ ք.Երևան Գևորգ Քոչարի փող., 21ա շենք	**Հասցեն՝** ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան **Կիևյան 1 շենք 31**
ՀՎՀՀ՝ 01548306	ՀՎՀՀ՝ 08433549
Բանկ՝ ՀՀ ՖՆ ԳՎ	**Բանկ՝** «Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 900011177095	Հ/Հ՝ **220593337979000** դրամային
Աշխատակազմի ղեկավար (պաշտոն) (ստորագրություն, Կ.Տ) Գ. Պետրոսյան (անուն,ազգանուն)	**Տնօրեն** Ա.Հակոբյան (ստորագրություն, Կ.Տ)
	Email texnikakan.anvtangutyun@mail.ru հեռախոսահամար +374-93-44-43-45

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020

ARMNAB

Armenian National Accreditation Body

№015/I-025

Հաստատված է
‹‹Տեխնիկական անվտանգության
փորձագիտական կենտրոն››ՍՊԸ-ի
տեխնիկական հսկողություն իրականացնող
մարմնի ղեկավար ______________ Ա.Ասլանյան

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № 263

ք. Երևան «11» 12. 2025թ

Սույն եզրակացությունը կազմվել է ‹‹Տեխնիկական անվտանգության փորձագիտական կենտրոն›› ՍՊԸ-ի տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի փորձագետ Վաhրամ Նուրոյանի կողմից:

Փորձագետ – Վաhրամ Միքայելի Նուրոյան

Կրթությունը – բարձրագույն

Մասնագիտությունը – փորձագետ. ճնշման տակ աշխատող սարքավորումների կաթսայատեղակայանքների և վերելակների ոլորտում

Փորձագետի վկայական -- №004, տրված 25.11.2025թ.

Աշխատանքային ստաժ – 10 տարի

Աշխատանքի գտնվելու վայրը – Հայաստանի Հանրապետություն ք.Երևան Կիևյան 1 շենք 31

բջջ. (+374)-98-88-66-69

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով» ՊՄ-ի աշխատակազմի ղեկավարի և <<Տեխնիկական անվտանգության փորձագիտական կենտրոն>> ՍՊԸ-ի տնօրենի միջև <<10>> 12. 2025 թվականին կնքված N.263 պայմանագրի՝ <<10>> 12. 2025 թվականից մինչև <<11>> 12. 2025 թվականը ‹‹Տեխնիկական անվտանգության փորձագիտական կենտրոն›› ՍՊԸ-ի տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի փորձագետ Վաhրամ Նուրոյանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացվեց «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով» ՊՄ-ի կողմից շահագործվող ք. Երևան Գևորգ Քոչարի 21ա **հասցեում գտնվող** կաթսայատուն արտադրական վտանգավոր օբյեկտում:




Նկար 1 Նկար 2

Արտադրական վտանգավոր օբյեկտի նկարագիրը՝

Կաթսայատուն – ջրատաքացուցիչ կաթսաներ

Ջրատաքացուցիչ կաթսա – ԱՏԱ 100կվտ

Գործարանային - №4

Օգտագործվող վառելիքը - բնական գազ

Նոմինալ հզորությունը – 100կվտ

Աշխատանքային ճնշումը - 0,4ՄՊա

Փորձաքննության ընթացքում արտադրական վտանգավոր օբյեկտում ուսումնասիրվել են՝

Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական փաստաթղթերը՝

Տեխնիկական անվտանգության վկայագիրը, որը **համապատասխանում է** «Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայագրին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 18.06.2015 թվականի N594-Ն հրամանի պահանջներին:

Հրահանգներ - հաստատված 19.11.2015 թվականին, որոնք **համապատասխանում են** տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին:

Հրահանգավորման մատյան - կազմված է 19.11.2015 թվականին, վերջին հրահանգավորումը կատարվել է 07.11.2025 թվականին, որը **համապատասխանում է** տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին:

Փորձարկման ակտեր - կաթսայի փորձարկումը իրականացվել է անվտանգ շահագործման պատասխանատու անձի մասնակցությամբ, որի արդյունքում 07.11.2025 թվականին կազմվել է հիդրավլիկ փորձարկման ակտը թույլատրվել է կաթսաների հետագա շահագործումը, որը **համապատասխանում**

է տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին:

Շենքերը և շինությունները – (առանձին կաթսայատուն, օդափոխություն, լուսավորություն, էլ. հողանցում)



նկար 3 նկար 4

որոնք **համապատասխանում են** ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Շոգու՝ մինչև 0,07 ՄՊա ավելցուկային ճնշմանբ շոգեկաթսաների, ջրի՝ մինչև 388կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոնները հաստատելու մասին» N 540-Ն որոշման հավելվածով սահմանված պահանջներին:

Տեխնոլոգիական սարքավորումները - (կաթսաների ավտոմատ կառավարման համակարգ, հնոց և այլն) որոնք **համապատասխանում են** ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Շոգու՝ մինչև 0,07 ՄՊա ավելցուկային ճնշմանբ շոգեկաթսաների, ջրի՝ մինչև 388կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոնները հաստատելու մասին» N 540-Ն որոշման հավելվածով սահմանված պահանջներին:

Տեխնիկական միջոցները - (չափիչ-ստուգիչ սարքեր, մանոմետր, ապահովիչ կափյուրներ և այլն) որոնք **համապատասխանում են** ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Շոգու՝ մինչև 0,07 ՄՊա ավելցուկային ճնշմանբ շոգեկաթսաների, ջրի՝ մինչև 388կ ջերմաստիճանի ջրատաքացուցիչ կաթսաների և կաթսայական տեղակայանքների սարքվածքի ու անվտանգ շահագործման կանոնները հաստատելու մասին» N 540-Ն որոշման հավելվածով սահմանված պահանջներին:

նկար 5



նկար 6

Արտադրական վտանգավոր օբյեկտի ինժեներատեխնիկական և մասնագետ կադրերը անցել են համապատասխան որակավորում վկայական №002796 տրված 17.10.2023 թվականին ուժի մեջ է մինչև 17.10.2026 թվականը:

Հիմք ընդունելով տեխնիկական անվտանգության փորձաքննության ուսումնասիրությունների արդյունքները՝ պարզվեց, որ «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով» ՊՄ-ի կողմից շահագործվող ք. Երևան Գևորգ Քոչարի 21ա **հասցեում գտնվող** կաթսայատուն

ԱՎՕ **3/1-0010**

արտադրական վտանգավոր օբյեկտին տրվում է **դրական** եզրակացություն:

Փորձագիտական եզրակացությանը կցվող նյութերը՝

1.Պատասխանատու անձի վկայականի պատճեն:

Տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի

փորձագետ_____Վահրամ Նուրոյան. Վկայական №004